ՆՈՐ-ԴԱՐ

№ 118 ՅԱՍԱՁՈՐՍԵՐՈՐԴ ՏՈՐԻ Շաբաթ 16 Յուլիսի 1897 Շաբաթ 16 Յուլիսի ՅԱՍԱՁՈՐՍԵՐՈՐԴ ՏՈՐԻ № 118

Բաժանորդագրութիւնն առնում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Дарь“ կամ Tiflis. Rédaction „Nor-Dar“.

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի մեծ օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով Յայտարարութիւնների համար 2 կ., կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — Թուշէթի ս. Գէորգ եկեղեցու վէճի առթիւ։
Եզուիտական մարդասիրութիւն։
Քրոնիկոն։—Լուրեր։
Գ. Պոլսի հայ թերթերից։
Գէորգեան ճեմարանի վարչութեան խնդիրը։
Թղթակցութիւններ.—Շամախի։
Քաղաքական. — Թուրքիա։ Բուլղարիա։
Հեռագրներ։
Բանասիրական։ — Մ՚ի ձեզ իսկական սէր։
Ցեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 15 յուլիսի 1897 թ.։

ԴՈՒՇԷԹԻ Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԷՃԻ ԱՌԹԻՒ

Վրաստանի Դուշէթ բաղաքի, աւելի ճիշտն՝ աւանի ս. Գէորգ եկեղեցու մասին ծագած վէճի մանրամասնութիւնը յայտնի պէտք է լինի «Նոր-Դար»-ի ընթերցողներին։

Մի քանի հայ ժողովուրդ գալիս է դարեր առաջ Վրաստան աշխարհի Դուշէթ կոչուած տեղը, և, ինչպէս հայերին յատուկ է, ձեռք է բերում եկեղեցի կանգնեցնելու և վիրեղմանատան համար տեղ։ Աւելի բարձր և ընդունակ կուլտուրական ազգեր հայ գաղթականներին սիրով ընդունել և տեղ են տուել՝ հենց իրենց շահերը ի նկատի առնելով՝ որովհետև հայերը չինող են և ոչ քանդող։ Զարմանք չէ, որ հայերը Դուշէթում իրենց ձեռք բերած գեղինը դրախտ դարձնէին ինչպէս և Դուշէթից մեզ գրած յօդուածում ասուած է.

«...Հայ գաղթականներին տրուած, յետ ընկած, ամայի բլրակը իւր փոքրիկ անտառով դառնում է մի կատարեալ դրախտ. ճոխ բուսականութիւն, առողջարար օդ, ցուրտ աղբիւր մաքուր, համեղ ջրով»,

Եւ ի հարկէ պէտք է որ այդ կտոր գեղինը դուշեթեցիներին շատ սիրելի լինի։ Թէպէտև մինչև օրս վիրեղմանատանը հայերն են թաղւում, վիրեղմանատան մատուռը (փոքրիկ եկեղեցին) նոյնպէս հայի ծախքով է շինուած և մինչև օրս էլ հայերն է լինում ժամասացութիւնը և իրրև հայոց ուխտատեղի է ճանաչուած, բայց տարիներ առաջ այդ փոքրիկ կալուածքի մասին վեճ է բացւում. կառավարութեան ներկայացուցիչը արքունական սեպհականութիւն է համարում, իսկ մի վրացի բնակիչ էլ հայոց եկեղեցուն պատկանել անտառը և գետինը իւր սեպհականութիւնն է համարում, բայց դատարանը վճռում է հայոց եկեղեցու օգտին և դատարանական բարձրագոյն աստիանը սենատը հաստատում է դատարանական վճիռը, այսինքն ճանաչում է հայոց վիրեղմանատան և մատուռին կից գետինը և անտառը իրրև հայոց եկեղեցու սեպհականութիւն։

Պէտք է ընդունէինք, որ յիշեալ վիրեղմանատան կից գետնի և անտառի մասին այլևս վեճ կարող չէ ծագել։ Բայց արի տես թէ ինչ հրաշքներ են գործում այն կարգի հրապարակախօսները, որոնք միմեանց հետ դարեր սիրով ապրող ժողովրդների մէջ թշնամութիւն սերմանելը պարծանք և մեծ գործ են համարում։

Այսօր Դուշէթի վրացի տգէտ ժողովուրդը զրգռուած նենգամիտ մարդկներից ոչ թէ յիշեալ հայոց եկեղեցուն պատկանող կալուածներին տիրանալ է ուզում, այլ յորդորում է ի լուր աշխարհի, թէ հայոց մատուռը հայոցը չէ, այլ վրացիների սեպհականութիւնն է, որ հայերը յափշտակել են...Այդ յիմարութեանն էլ հաւատացող կայ։

Ո՞րտեղ էին մինչև օրս վրացիները, ինչպէս են յափշտակել հայերը վրացիներից և մր օրը, ինչու էին լռում վրացիները, ինչու գոնէ դատարանում իւր ժամանակին այդ մասին ոչինչ չէին յայտարարում և այլ այդ տեսակ շատ հարցեր կարելի է առաջարկել, բայց բանն այնէ, որ այդ կալուածքի մասին բնակութիւն է ըսկըսուել։

Դուշէթի պ. թղթակիցը հրաւիրից հայոց հոգևոր իշխանութեան ուշադրութիւնը բացուած վեճի վրայ։

Խնդիրն այնէ, որ գործը իսկապէս այն չէ՝ թէ Դուշէթի հայերը կըկորցնեն իրենց պատկանեալ մատուռը, նրան կից կալուածքը. հայերը կարող են և այդպիսի մի կալուածք ընծայել տեղւոյն վրացիներին։

Խնդիրն այն է, որ դարեր շարունակ հայոց եկեղեցուն պատկանեալ և բարձրագոյն դատարանով հայոց եկեղեցու սեպհականութիւն ճանաչուած կալուածքի մասին կարող է վէճ բացուել. ուրեմն ինչ չի պատահիլ այն կալուածներին, որոնց սեպհականութեան հաստատութիւնն աւելի վկաների ցուցմունքների վրայ է հիմնուած։

Եւ եթէ հայոց հոգևոր իշխանութեան դանդաղութեան և անտարբերութեան շնորհիւ Դուշէթի այդ կալուածքը հայոց եկեղեցու ձեռքից գնաց—այն ժամանակ հայերի թշնամիները և գրպարտողները զօրաւոր փաստ կունենան ձեռքներին՝ միամիտ աշխարհին հաւատացնելու, որ հայերը ամեն տեղ յափշտակել են վրաց պատկանեալ կալուածները և թէ հայերիս պատկանեալ շատ վանքեր և այլն յափշտակութեան արդիւնք են։ Գան հօ յիմարներ, որոնք, կարծում են, որ Թիֆլիսի հայոց եկեղեցիների մի մասը վրաց սեպհականութիւն է եղած...

Ճանկալի էր, որ տեղւոյս հայոց հոգևոր իշխանութիւնը Դուշէթի մատուռի և նրան կից անտառի վէճին միջամտէր ժամանակին, գործի քննութեանը եռանդով հետեւէր և եկեղեցու իրաւունքները պահպանելու օրինական միջոցների հոգսը տանէր։

Եթէ հայ հոգևորականութիւնը թաղելու մէջ եռանդ է ցոյց տալիս, պէտք է որ վերեզմանատունը պահպանելու համար էլ նոյնպէս եռանդ այայտարարէ։

ԵԶՈՒԻՏԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Գ. Պոլսի «Մասիս» լրագիրը թարգմանաբար հրատարակել է մի որոշմանագիր, որ պատրաստած է Բայբըլ Հաուզի մէջ գումարուած միսիոնարական մի ժողով հայ որբերի կրթութեան և նրանց կրօնական պարտականութեանց կատարման կերպի մասին։

Հետևեալ անգամին թողնելով այդ որոշմագրի առթիւ մեր անելիք դիտողութիւնները, այս անգամ մենք բաւականանում ենք նրա թարգմանութիւնը ներկայացնելով մեր ընթերցողներին։

«Նկատելով որ Հայ. եկեղեցւոյն մէջ զօրեղ փափաք մը կարտայայտուի ապահովութիւն մը ձեռք բերելու թէ լուսաւորչական հայ որբերը մարդասիրաբար խնամելու քօղին տակ Ամերիկացի Միսիոնարք կրօնափոխական ազդեցութիւններ ի գործ պիտի չդնեն անոնց վրայ, արևմտեան Թուրքիոյ միսիոնարութիւնն այս տղոց հետ վարուելու խնդրոյն վրայ իրրև հիմնական կանոն հետևեալ սկզբունքները կըհաչակէ, անոնց ընդունելութիւնն յանձնարարելով ոչ միայն արևմտեան միսիոնարութեան զանազան կայաններուն, այլ և Ամերի-

—Ինչ է պատահել։

—Գլխացաւ ունի։

Նա մօտեցաւ պատուհանին և սկսեց ապակու վրայ թմբկահարել մատներով։ Որովհետև մենք մտերիմ բարեկամներ էինք, ուստի և ես հարկ չհամարեցի զլացնել նրան որ ևէ բանով, այլ շարունակեցի իմ պարապմունքս և սկսեցի զամչի մի կտորով սրբել մի քանի գործիքներ, որոնք արկղի մէջ ժանգոտել էին խոնաւութիւնից։ Վերցնելով սեղանի վրայից նշտարը, նա դրեց այն իւր կրծքի վրայ և կատակի ձևով հարցըրեց ինձ.

—Իսկապէս ո՞ր տեղումն է պտուտք մարդուս սիրտը։

Ես մատով ցոյց տուի նրան տեղը։

—Ահա այստեղ։

—Խորը պէտք է խոցել,—շարունակեց նա, չթողնելով ձեռքից նշտարը։

—Ոչ, միքանի սանտիմետր միայն, և բաւական է։

Նա ոչ մի կասկած չարտայայտելով, նայում էր ուղիղ իմ աչքերին, և ես առաջին անգամն էր, որ նրանց մէջ նշմարեցի մի ինչ որ սուր փայլ, մի ինչ որ անսովոր, վայրենի արտայայտութիւն։ Փոթորկի նման իմ գլխովս անցաւ մի միտք թէ ահա հենց այժմ, իմ աչքերի առաջ, Բորեգարը կըխրի նշտարը իւր կրծքի մէջ։ Ինձ սիրեց մի անմիտ երկիւղ։ Այս նախազգացումը թէև վայրենի և անհիմն էր, սակայն ամբողջ մարմնովս սարսռացի։ Ղօրցնելով ինքս ինձ, խլեցի նրա ձեռքից նշտարը։ Նա չէր ընդդիմանում։ Հանդարտ քայլերով նա դիմեց վառարանի կողմը և նստեց այնտեղ բազկաթոռի վրայ ու մտքերի մէջ խորասուզուած դիտում էր կրակը։ Նրա լռութեան մէջ թէև առանձին ոչինչ չկար, բայց և այնպէս այդ լռութիւնը ինչ որ մի տեսակ ծանր, անհաճոյ տպաւորութիւն էր գործում վրաս։ Անցաւ միքանի րոպէ. Բորեգարը չարունակում էր լռել։ Ես չկարողացայ այլևս դիմանալ տիրող լռութեանը, մօտեցայ նրան, և բռնելով նրա ձեռքը, հարցրի։

—Ինչ է պատահել քեզ։ Դու առողջ չես։

Նրա զարկերակը հաւասարապէս զարկում էր, ձեռքը սառն էր։ Նա բարձրացրեց աչքերը և ժպտաց խղճալի հիւանդ ժպիտով. իսկ յետոյ, յանկարծ, բացուած ագռիւրի նման, նրա աչքերից արտավիժեց արտասուքը։

Խոնարհեցնելով իւր անօգնական գլուխը կանեփս վրայ, նա երկար ժամանակ անզուսպ և յուսահատ հեծկըլտում էր։ Նրան հանդարտացնելու համար մի դարման պատրաստելու նպատակով, ես զգուշութեամբ ազատուեցի նրա գրկից։ Մնալով միայնակ, Բորեգարը իրեն կողմը քաշեց բազկաթոռի բարձը և գլուխը նրա մէջ խրելով, չարունակում էր կարկամիչ կերպով արտասուել։ Ես սիրեցի նրան ջուր խըմել։ Նա մի փոքր հանդարտացաւ, սրբեց աչքերը և դիտում էր ինձ առաջուան արտասովոր հիւանդ հայեացքով։

— Սա... սա շատ ծիծաղելի է, այդպէս չէ.— արտասանեց նա մեղաւորի նման աչքերը ցած ձգելով։—Ցտամաբ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Մ՚Ի ՁԵԶ ԻՍԿԱԿԱՆ ՍԷՐ

Պոլ Մարգերիտի

—...Նա սիրում էր նրան,—նկատեց ներկայ եղողներից մէկը հակառակութիւն չթոյլատրող եղանակով։

—Ի՞նչ... նա սիրում էր նրան,—բացականչեց դժգոհութեամբ բարի և ծերունի դոքտոր Մոտրէն։—Ասացէք այդ ում որ կամենաք, բայց ոչ ինձ։ Ի՞նչ սէր է այդ։ Մմուսինը իմանում է իւր ամենաօրից, որ իւր կինը իրեն դաւաճանում է. ինչ է անում նա. չկամենալով նոյն իսկ տառապել և համոզուիլ այդ բանում, նա վերադառնում է տուն և իւր կնոջը քնած գտնելով, նստեցնում է նրա գլխի մէջ երկու գնդակներ։ Հրէշաւոր չէ արդեօք այդ վարմունքը։ Այո այդ մարդը տոր է նոյն իսկ ամենավերջին անասնից։ Այդ սատանայական եսասիրութիւն է։ Նա սիրում էր նրան... Ոչ, պարոնս, նա չէր սիրում, եթէ սիրելիս լինէր՝ ոչ թէ նրան, այլ աւելի շուտ ինքն իրեն կսպաներ։ Եթէ ես երդուեալներից լինէի ոչ թէ միայն չէի արդարացնել այդ տոր քաջագործին, այլ ամեն միջոց գործ կդնէի, որ մահուան պատժի ենթարկէին նրան։ Մի՞թէ կարելի է խնայել գազանին, որը իւր փառասիրութեան, երկչոտութեան և հասարակաց կարծիքի երկիւղի պատճառով տակ ոճիր է գործում ուրիշի կեանքի դէմ։ Ոչ, երբէք... Այստեղ չկայ նոյնիսկ սիրոյ հետք։ Իսկական սէրը չէ ընկնում մեր եսասիրութեան ետևից. նա ներողամիտ է լինում և սածծ հաստատելու համար ես կարող եմ հետևեալ պատմութիւնը անել...

Արտասանելով այս, բժիշկը խմեց տառած կոֆէի վերջին կումը և լռեց։

—Պատմեցէք, դոքտոր, պատմեցէք,—լսելի եղաւ ամեն կողմերից հետաքրքիր խօսակիցների ձայնը։ Ցան սրինգը չտապով դրեց ծերունու առաջ կոֆէի երկրորդ գաւաթը։

Դոքտորը դանդաղութեամբ շարժեց իւր արծաթափայլ ծերունի գլուխը և լցրեց իւր համար մի բաժակ լիկեօր։

—Այս պատմութիւնը բոլորովին հետաքրքիր չէ, ասաց նա, մի փոքր լուսթիւնից յետոյ։—Նա նշանակութիւն ունի միմիայն իմ վերաբերութեամբ, որովհետև նրա հետ կապ ունին յիշողութիւններ իմ երիտասարդութեանս ամենալաւ բարեկամիս մասին, որը դեռ այնքան վաղ վերեզման իջաւ։ Այդ յիշողութիւններն արծարծել հաճելի չէ ինձ։

Հիւրերը սոխպեցին նրան, և դոքտորը վերջապէս հաճեցաւ կատարել նրանց խնդիրը։

—Այդ ժամանակ ես պատրաստում էի իմ դիսերտացիան,—սկսեց նա, ծրխելով իւր հանգած սիգարը, Պարիզում ես շատ ծանօթներ չունէի և այդ պատճառով էլ հաճութեամբ էի ընդունում իմ ընկեր Բորեգարի իրեն մօտ ճաշելու հրաւէրը։ Մենք ծանօթ էինք մանկութիւնից և, չնայելով այն բանին, որ նա բաւականին մեծ էր ինձանից, անկեղծօրէն սիրում էինք իրար։ Լինելով բարձրահասակ, բարեկազմ և գեղեցիկ խարտեաշ կանանց չքնաներում նա կարող էր մեծ առանձնաշնորհութիւններ վայելել, եթէ այնքան վաղ չպատկուէր։ Այդ ժամանակ նա արդէն 6 տարուան ամուսին էր և ունէր մի շատ սիրուն կին։ Նրա կինը թէև ինձ չէր դիւր գալիս. բայց յայտնի գեղեցկու հիներից՝ էր, որի գէմքը ներկայացնում էր կեղծաւորութեան, թեթևամտութեան և ցոփութեան մի այնպիսի խառնուրդ, որ երբեմն չկարողանալով դիմանալ նրա անթարթ հայեացքին, ես կարմրում էի ազջկայ նման։ Մի խօսքով եթէ ճշմարիտ է այն, թէ սէրը ստեղծագործւում է հակադիր հանգամանքների տակ, ուրեմն Բորեգար ամուսինները պէտք է չափազանց սիրէին միմեանց։ Եւ, իրաւի, ես էլ միշտ նրանց օրինակելի ամուսիններ էի համարում։

Մի անգամ, նախաճաշից յետոյ, բոլորովին անսպասելի, յանկարծ հնչեց նախասենեակում զանգակի ձայնը։ Ես բաց արի դուռը և տեսայ իմ առաջ Բորեգարին, որի մօտ հենց այդ օրը պիտի ճաշէի։

Նա ներս մտաւ ինչպէս և միշտ հանդարտ, բայց նրա ձայնը դողդողում էր, իսկ դէմքը, որ ծածկուած էր փառաւոր չէկ մորուքով, ոչ մի ներքին յուզում չէր արտայայտում։

—Եթէ միևնոյն է քեզ համար, խընդրում եմ, որ ճաշելու գաս մեզ մօտ մի ուրիշ անգամ,—արտասանեց նա.—կինս մի փոքր առողջ չէ։

—Ինչ է պատահել։

—Գլխացաւ ունի։

Նա մօտեցաւ պատուհանին և սկսեց ապակու վրայ թմբկահարել մատներով։ Որովհետև մենք մտերիմ բարեկամներ էինք, ուստի և ես հարկ չհամարեցի զլացնել նրան որ ևէ բանով, այլ շարունակեցի իմ պարապմունքս և սկսեցի զամչի մի կտորով սրբել մի քանի գործիքներ, որոնք արկղի մէջ ժանգոտել էին խոնաւութիւնից։ Վերցնելով սեղանի վրայից նշտարը, նա դրեց այն իւր կրծքի վրայ և կատակի ձևով հարցըրեց ինձ.

—Իսկապէս ո՞ր տեղումն է պտուտք մարդուս սիրտը։

Ես մատով ցոյց տուի նրան տեղը։

—Ահա այստեղ։

—Խորը պէտք է խոցել,—շարունակեց նա, չթողնելով ձեռքից նշտարը։

—Ոչ, միքանի սանտիմետր միայն, և բաւական է։

Նա ոչ մի կասկած չարտայայտելով, նայում էր ուղիղ իմ աչքերին, և ես առաջին անգամն էր, որ նրանց մէջ նշմարեցի մի ինչ որ սուր փայլ, մի ինչ որ անսովոր, վայրենի արտայայտութիւն։ Փոթորկի նման իմ գլխովս անցաւ մի միտք թէ ահա հենց այժմ, իմ աչքերի առաջ, Բորեգարը կըխրի նշտարը իւր կրծքի մէջ։ Ինձ սիրեց մի անմիտ երկիւղ։ Այս նախազգացումը թէև վայրենի և անհիմն էր, սակայն ամբողջ մարմնովս սարսռացի։ Ղօրցնելով ինքս ինձ, խլեցի նրա ձեռքից նշտարը։ Նա չէր ընդդիմանում։ Հանդարտ քայլերով նա դիմեց վառարանի կողմը և նստեց այնտեղ բազկաթոռի վրայ ու մտքերի մէջ խորասուզուած դիտում էր կրակը։ Նրա լռութեան մէջ թէև առանձին ոչինչ չկար, բայց և այնպէս այդ լռութիւնը ինչ որ մի տեսակ ծանր, անհաճոյ տպաւորութիւն էր գործում վրաս։ Անցաւ միքանի րոպէ. Բորեգարը չարունակում էր լռել։ Ես չկարողացայ այլևս դիմանալ տիրող լռութեանը, մօտեցայ նրան, և բռնելով նրա ձեռքը, հարցրի։

—Ինչ է պատահել քեզ։ Դու առողջ չես։

Նրա զարկերակը հաւասարապէս զարկում էր, ձեռքը սառն էր։ Նա բարձրացրեց աչքերը և ժպտաց խղճալի հիւանդ ժպիտով. իսկ յետոյ, յանկարծ, բացուած ագռիւրի նման, նրա աչքերից արտավիժեց արտասուքը։

Խոնարհեցնելով իւր անօգնական գլուխը կանեփս վրայ, նա երկար ժամանակ անզուսպ և յուսահատ հեծկըլտում էր։ Նրան հանդարտացնելու համար մի դարման պատրաստելու նպատակով, ես զգուշութեամբ ազատուեցի նրա գրկից։ Մնալով միայնակ, Բորեգարը իրեն կողմը քաշեց բազկաթոռի բարձը և գլուխը նրա մէջ խրելով, չարունակում էր կարկամիչ կերպով արտասուել։ Ես սիրեցի նրան ջուր խըմել։ Նա մի փոքր հանդարտացաւ, սրբեց աչքերը և դիտում էր ինձ առաջուան արտասովոր հիւանդ հայեացքով։

— Սա... սա շատ ծիծաղելի է, այդպէս չէ.— արտասանեց նա մեղաւորի նման աչքերը ցած ձգելով։—Ցտամաբ-

Հետո փոքր-ինչ լռելուց հետո, — նորից սկսեց նա, — ես ձեզ ասացի, որ ես ամուսնացած եմ եղել, և ձեզ համար հասկանալի է, որ ես ունեցել եմ կին, որի մասին ես ոչինչ չգիտեմ, ոչ էլ ուզում եմ գիտենալ։ Ես նրան թողել եմ, ինչպես որ ես թողել եմ ամեն ինչ, որ ինձ հետ է պատկանել։ Ես նրան թողել եմ ոչ միայն այն պատճառով, որ նա ինձ համար դարձել էր անտանելի, այլ և այն պատճառով, որ ես սիրահարվել էի մի ուրիշ կնոջ։ Ես նրան թողել եմ, որովհետև ես ուզում էի նրան խաբել, ես ուզում էի նրան ստել, ես ուզում էի նրան ասել, որ ես սիրում եմ նրան, մինչդեռ ես սիրում էի մի ուրիշ կնոջ։ Ես ուզում էի նրան ասել, որ ես ազատ եմ, մինչդեռ ես կապված էի։ Ես ուզում էի նրան ասել, որ ես ամուսնանում եմ, մինչդեռ ես ամուսնացած էի։ Ես ուզում էի նրան ասել, որ ես ամուսնանում եմ, մինչդեռ ես ամուսնացած էի։ Ես ուզում էի նրան ասել, որ ես ամուսնանում եմ, մինչդեռ ես ամուսնացած էի։

Ես ուզում էի նրան ասել, որ ես ամուսնանում եմ, մինչդեռ ես ամուսնացած

— Մեր ընկերը մտածում է, որ մի անգամ էլ ձեզ տեսնելով՝ ավելի հեշտ կլինի նրան համոզել, որ ձեզ ֆինանսական տեսակետից ոչ մի վնաս չի հասցնի, եթե ձեզ հրավիրի իր մոտ և ձեզ հետ մի քանի ժամ զրուցի։

Ֆրանսուան ժպտալով նայեց Ժանին և ասաց.

— Ես ուրախ կլինեի, եթե ինձ հրավիրեր ձեր ընկերը, որովհետև ես ինքս էլ ուզում եմ նրա հետ խոսել։ Ես ուզում եմ նրան հարցնել, թե ինչպես է նա կարողանում ամեն ինչ իմանալ

մենք ոչ թէ միայն փոխառութիւնների կարիք չունինք, այլ ամեն կողմից գրամատէրերն իրենց ծառայութիւններն են առաջարկում մեզ։ Բոլոր մինիստրութիւնների մէջ աշխատում են զարգացնելու առևտուրն ու արդիւնաբերութիւնը, այլ և բարելաւելու ճանապարհները գլխաւորապէս ռազմական տեսակէտից։ Կարճ ասած մենք հպարտանում ենք մեր այժով»։

ԲՈՒԼՂԱՐԻԱ

Կիսապաշտօնական «Italia» լրագրի աշխատակիցներից մէկը մի զրուցագրութիւն է ունեցել բուլղարական մինիստրնախագահ Ստոիլովի հետ։ Ամենից առաջ խօսք է բացել Ֆերդինանդ իշխանի իրեն թագաւոր հրատարակելու մասին։

«Օ՜, մի հաւատաք այդ լուրերին,— պատասխանեց Ստոիլովը.— մի հաւատաք գոնէ այժմ։ Դա լրագրական սովորական զառարկայանութիւն է։ Ոչ, նորին բարձրութիւնն առայժմ հարկ չունի այդ մասին չատ մտածելու։ Չէ որ դա պայմանաւորւում է չրջափոխութեամբ։ Երբ կհասնի հոգեբանական վայրկեանը, այնժամանակ գործն ինքն իրեն կլուծուի, բայց ոչ այժմեան պարագաներում։ Մեր քաղաքականութիւնը, ինչպէս ձեզ յայտնի է, ձգտում է ամենից առաջ այն բանին, որ Եւրոպային ոչ մի զժուարութիւն չպատճառի. դրա համար էլ մենք կարգապահութեան և խաղաղութեան տարր ենք հանդիսանում բալկանեան թերակղզում, և այդ բանից է կախուած Եւրոպայի խաղաղութիւնը։ Սակայն նորին բարձրութիւնը կարիք չունի արքայական տիտղոսի. Իշխանին արքայական պատիւներ են տալիս, նրան արդէն թագաւորի նման են ընդունում բոլոր արքունիքներում։ Ահա թէ ինչու նորին բարձրութիւնը արքայի տիտղոսը կընդունի միայն յարմար ժամանակին։ Բայց այժմ արդէն նորին բարձրութիւնն անկախ պետէ։ Ճիշտ է, մենք տուրք են տալիս Թիւրքիային, բայց Դրան գերիշխանական իրաւունքների մասին խօսել այժմ չարժէ...»։

Այնուհետև խօսք ընկաւ Բուլղարիայի դէպի Ռուսիան ունեցած յարաբերութիւնների մասին.

«Մի քանի մասին,—ասաց Ստոիլովը,—Եւրոպայում առհասարակ սխալ կարծիքներ են յայտնում մեր վերաբերմամբ։ Եւրոպայում սիրում են մեր իշխանութիւնը ներկայացնել իբրև մի սարկաւագի վասալ, որը պատրաստ է առաջին պատահած տիրոջ կամ հովանաւորի ոտները ընկնել։

«Բանն այն է, որ վերջին ժամանակս մեր դէպի Ռուսիան ունեցած յարաբերութիւնները վատ էին հասկանում և աւելի ևս վատ էին բացատրում։ Մինչէ բան այնտեղը չհասցրին, որ մեզ դրում էին մեզ, թէ մենք մտադրութիւն ունինք ռուսացնելու Բուլղարիան։

«Ռուսիան մի ընդարձակ երկիր, մի հզօր հարևան է, որի հետ չի կարելի չկռուել և որի հետ իսկապէս կռւում են։ Բացի դրանից, մեզ բուլղարացիներիս պէտք է թոյլ տալ, որ մի քիչ յարգենք Դանուբի այն կողմը բնակուող մեծ ազգին։ Միմէ միայն մենք ենք այսպէս վարւում. մեմէ Պետերբուրգի կառավարութեան բարեկամութիւնը վայելելու չեն ձգտում առաջնակարգ պետութիւններ։

«Ինչու են նրանք այդպէս վարւում։ Որովհետև այդ պահանջում են նրանց շահերը... Բայց քանի որ մեծ պետութիւնների շահերը ստիպում են նրանց ջնջել Ռուսիայի առաջ, ապա ինչու մենք, որ փոքրիկ ազգ ենք, չենք կարող առանձին շահ ունենալ լաւ յարաբերութիւններ պահպանելու հիւսիսային սլաւեանների հետ։

«Այնուամենայնիւ մեր նշանաբանն է ամենից առաջ Բուլղարիան բուլղարներին։

«Մենք մի օրինակ բարեկամական յարաբերութիւններ ենք պահպանում մեր բոլոր հարևանների հետ, և ապացոյց կարող են լինել առևտրական այն դաշնագրերը, որ մենք հաստատել ենք ինչպ ս Աւստրիայի, այնպէս և միւս պետութիւնների հետ։ Այժմ մենք պատրաստում ենք առևտրական դաշնագիր հաստատել և Իտալիայի հետ»։

ՀԻՆ ՍԵՐԲԻԱ

«Ռուսկո» լրագիրը մի թղթակցութիւն է տպել, որի մէջ հետևեալ մանրամասնութիւններն է հաղորդում Սերբիայի սահմանակից երկիրների և Հին Սերբիայի քրիստոնեաների ողբալի դրութեան մասին։

«Վերջ ժամանակից, երբ Պրիշտինի և Լաբայի չրջակայքը վիրաւորման արձագանգ-կամաւոր-զինուորները ահ ու սարսափ է տիրել ամբողջ երկրին, և ոչ ոք չգիտէ, թէ վաղը կենդանի կլինի ինքն արդեօք։

«Թուրք իշխանութիւնը արնաուռներից չի առել ոչ հրացանները, ոչ զինուորական պարագաները. արնաուռները հպարտանալով այդ բանով սպառնում են յարձակում գործել Սերբիայի վրայ։ Լաբայի մօտ այդ վայրենի աւազակների ձեռքից սերբերի կրած տանջանքներն ու չարչարանքներն անվերջ են. դժուր է երևակայել, թէ ինչեր են անում արնաուռները։ Բայց նրանք չեն բաւականանում Հին Սերբիայի սահմանների մէջ գործելով. նրբանք անցնում են և սերբական ազգաբնակ հողերը։ Այսպէս, օրինակ. ամսի 3-ին արնաուռ-կամաւոր զինուորներ թուրք սահմանապահ զինուորների հետ միասին անցան սահմանը և գարանակալեցին, որևէ մեկոկ ճանապարհորդի սպասելով։ Այդ ժամանակ այն կողմով անցնում էր սերբական սահմանապահ օգնամարի կապրաչ Մարիչը. աւազակներն իսկոյն և եթ հրացաններ պարպեցին նրա վրայ և երբ դժբաղդը ինն տեղից վէրք ստացած վայր ընկաւ, նրանք դուրս եկան գրանից, դաշոյնի մի քանի հարուածներ ևս տուին և կողոպտեցին։ Ինչպէս տեսնում էք, մենք չենք դադարում մեր գլխով վարձահատոյց լինել այն հողը տիրապետելու իրաւունքի համար, որ մենք ձեռք ենք բերել արեան հեղեղների գնով և որը տուել է մեզ Եւրոպան։ Մարիչն արդէն հինգերորդ զոհն էր, որ ընկաւ արնաուռների ձեռքից վերջին երեք շաբաթուայ ընթացքում. իսկ այդ ժամանակում որքան դիւղեր են կողոպտուած և այրուած»։

«Ներէկ,—շարունակում է թղթակիցը,—մի նամակ ստացայ Պիրշտինից. այդ նամակը լի է սարսափելի պատմութիւններով այն մասին, թէ ինչ են անում արնաուռները Թշուառ սերբերի գլխին Կոսսովի դաշտում։ Այս աւազակութիւններն ի նկատի ունենալով, կարելի է հետևեալ հարցը տալ. պէտք է մենք արդեօք թոյլ տանք, որ աւազակների այս խումբը, Թիւրքիայից պաշտպանութիւն գտնելով, անպատիժ չարիքներ գործէ մեր սահմանի վրայ, և չպէտք է արդեօք, որ մենք տասնապատիկը վրճարենք նրանց. Չպէտք է արդեօք մենք հետամուտ լինինք այդ գազան արնաուռներին և ոչնչենք նրանց ուր կուզէ լինի։ Բոլոր միջոցները թոյլատրելի են, երբ ապրում ենք աւազակների մէջ»։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՒՐԼԴՐԱԴ, 14 յուլիսի.—Սկուպշտինան Մինիստր նախագահը, պատասխանելով Գերսիչին և Օսուրգիչին, հաղորդում է, որ Սերբիայի Գ. Պոլսի ներկայացուցչի ներկայացրած վճռական առաջադրութիւնների հիման վրայ Դուռը հրամանագրել է Մոնաստիրում և Սալոնիկում սերբական գպրոցներ բանալու։ Ընդունելով պատրիարքարանի ցոյց տուած յամառութեանը, Ռուսիան խորհուրդ է տալիս Իւսկիւբի գործում չափաւորութիւն պահպանել և նախազգուշացնում է ազանդներից։ Վերջերումս պատրիարքարանը տրամադրութիւն է ցոյց տալիս սերբական ժողովրդի գոհացնելու համար փոխադարձ համաձայնութեամբ զիջումներ անելու։ Ցոյս կայ նոյնպէս, որ չուտով ճանաչուի սերբական ազգութիւնը։ Գերսիչը շնորհակալութիւն է յայտնում կառավարութեանը իր կրած անդադրում աշխատանքների համար, Ռուսիային լիակատար պաշտպանութեան համար Ընդհանուր-սերբական միաբանագործակցութեան համար։ Սկուպշտինան միաձայն քուէարկեց Գերսիչի հերթական գործերին անցնելու առաջարկած բանաձևը, որը ցուցանում է յայտնում այն բանի համար, որ Սերբիայի օրինական պահանջները Թիւրքիայի կողմից դժուարութեան են հանդիպում, այլ և շնորհակալութիւն ուղղահայտնում է կառավարութեան։ Սկուպշտինայի նստաշրջանը փակուած է։

ՋԻՒՐԻՒ.—Ծանոտխառը վերջացած է համարւում։ Արդէն 20 օր է, որ հիւանդութեան ոչ մի դէպք չէ պատահել։

Կ. ՊՈԼԻՍ.—Յուլիսի 14.-ին կայանալու է հաշուեթեան պայմանների 13-րդ ժողովը։ Մի քանի յօդուածներ դեռ ևս պէտք է քննութեան ենթարկուեն։ Հաշուեթիւնը բոլորովին վերջացնելու համար. հաւանական է որ դեռ երկու ժողով ևս տեղի ունենայ։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿԱՆԱՉՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԾՆՆԴԱԲԵՐԱՑԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ

(Սոլոլակ, Սադովայա փողոց, № 64

(սեպհական տուն)

Հեռաթոռ № 230

Երթեւեկ հիւանդների ընդհանուր ընդունելութիւնը երկուշաբթի, չորեքշաբթի, եւ ուրբաթ օրերը, ժամը 2—4 ցերեկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ. մասնաւոր ընդունելութիւնը ամենայն օր, ժամը 9—10 առաւօտեան վճարը 2 ր.։ Դիշերօթիկ հիւանդներ ծննդաբեր կանայք ընդունւում են գիշերուայ և օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի տրուի. վճարը սրսշւում է ըստ դասակարգերի։ Չունեորները ձրի են։ Ֆիննկոպիայի բաժանմունքը մանուկները վճարում են 1 ր. 50 կ. մինչև 5 ր. մի օրուգիշերուայ համար. Ծննդաբերական բաժանմունքը մանուկները—1 ր. մինչև 5 ր. մի օրուգիշերուայ համար։ Երկունքից ազատելը 10 ր. մինչև 50 ր. Անդամահատութիւնը ըստ համաձայնութեան։ Երթեւեկ բոլոր հիւանդները դեղեր և նիւթեր ստանում են ընդունելութեան ժամանակ ծրի։ Չունեորների համար 1-ական մահճակալ է դրուած իւրաքանչիւր բաժանմունքում, ուր տեղաւորւում են նրբանք տեսչի և նրա պ. պ. ընկերների առաջարկութեամբ ծրի։

Հիւանդանոցի տէր և տեսուչ

100—52 Մ. ՄԿՐՏՉԵՒՆ։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար № 1 գնացքը դուրս է գալիս Բագուից դէպի Թիֆլիս օրուայ 4 ժամ և 1 րոպ. Թիֆլիս է հասնում առաւօտեան 8 ժամ 30 րոպ։ Դուրս է գնում Թիֆլիսից դէպի Բաթում առաւօտեան 9 ժամ և 15 րոպ. Բաթում է հասնում երեկոյեան 8 ժամ և 48 րոպ.

Մարդատար № 9 գնացքը դուրս է գալիս Բագուից դէպի Թիֆլիս գիշերուայ 12 ժամ և 6 րոպ. Թիֆլիս է հասնում երեկոյեան 7 ժամ և 10 րոպ. Դուրս է գնում Թիֆլիսից դէպի Բաթում երեկոյեան 7 ժամ 55 րոպ. Բաթում է հասնում առաւօտեան 8 ժամ 45 րոպ.։

Մարդատար № 2 գնացքը դուրս է գալիս Բաթումից դէպի Թիֆլիս առաւօտեան 7 ժամ 45 րոպ. Թիֆլիս է հասնում երեկոյեան 8 ժամ 34 րոպ.։ Թիֆլիսից դէպի Բագու է դուրս գնում երեկոյեան 9 ժամ 34 րոպ. և Բագու է հասնում օրուայ 1 ժամ 2 րոպ.։

Մարդատար № 4 գնացքը Բաթումից դուրս է գալիս դէպի Թիֆլիս երեկոյեան 8 ժամ 35 րոպ. Թիֆլիս է հասնում առաւօտեան 9 ժամ 11 րոպ.։ Թիֆլիսից դուրս է գալիս դէպի Բագու առաւօտեան 11 ժամին և Բագու է հասնում առաւօտեան 6 ժամին։

ՊՈՍՏԱՑԻՆ ԿԱՌՔԵՐԻ ԵՐԹԵՒԵ ԿՈՒԹԻՒՆ ՌԱԶՄԱՎԻՐԱԿԱՆ ՃԱ ՆԱԳԱՐՀԻ ՎՐԱՑ,ՍԿՍԱԾ ՄԱՅԻՍԻ ՄԷԿԻՑ ՄԻՆՉԵՒ *1897* ԹՈՒԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ ՄԷԿԸ։

Թիֆլիսից։—5 տեղ ունեցող կառքը առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում և հասնում է Վլադիկաւկազ յաջորդ օրը, երեկոյեան ժամը 7 ին։ Դարձեալ 5 տեղ ունեցող կառքը առաւօտեան 10 ժամին, գիշերում է Պասանաուր կայարանում և յաջորդ օրը երեկոյեան 9 ժամ 10 րոպէին հասնում է Վլադիկաւկազ. 6 ունեցող կառքերը(առանց գիշերելու) դուրս են գալիս առաւօտեան ժամը 7-ին և երեկոյեան ժամը 3 ին և յաջորդ օրը հասնում են Վլադիկաւկազ—առաջինը առաւօտեան 9 ժամին, իսկ երկրորդը երեկոյեան 5 ժամ 20 րոպ.։

Վլադիկաւկազից։—հինգ տեղ ունեցող կառքերը դուրս են գնում առաւօտեան ժամը 7-ին (գիշերում է Մլէթում), դարձեալ առաւօտեան ժամը 9-ին (գիշերում է Դուդաուր կայարանում)։ Թիֆլիս են հասնում յաջորդ օրը երեկոյեան 7 ժամ 25 րոպ. և դարձեալ երեկոյեան 8 ժամ 15 րոպէին։

Վից տեղ ունեցող կառքերը (առանց գիշերելու) դուրս են գնում առաւօտեան 8 և երեկոյեան 7 ժամին և յաջորդ օրը հասնումեն Թիֆլիս—առաջինը առաւօտեան 8 ժամ 15 րոպ. և երկրորդը երեկոյեան 8 ժամին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊՈՏԿԵՐԱԶԱՐԴ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա.

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Բ.

ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ի. Հ. Գաբրիել Վ.-Է Մէնէվիշեան

(Մխիթարեան ուխտէ)

Իւրաքանչիւր կազմուած հատորի գինը 4,25 ֆ. (1 ր. 85 կ.)

5—2

ԿՈՒԶՄԻՉԻ „ԷՖԷԴՐԱ“

ԴԵՂՁԱՅԻՆ ԽՈՏԵՐԻ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ

Ուղարկում եմ պոստով Ռուսիայի բոլոր տեղերը, փոստով և վերադիր վճարով Էֆեդրայի ամենաբարձր տեսակները—բնաիր, մայիսեան, բայլդամի յատկութիւն ունեցող.—անուռաայինը—ֆունտը 5, 4 և 3 ր., պաշտպինը—2 և 1 ր.։ Հետն ուղարկում եմ և խրատներ, թէ ինչպէս պէտք է գործածել այս դեղը, որը վերականգնում է կանոնաւոր մարսողութիւնը և բուժում է ամեն տեսակ ստկրացաւերը, ստամոքսի և աղիքների կատարրը, շրչարկելութիւնը, հաղը, փորակալը, դեղձոտերեան և հեռացնում է սակաւարիւնութեան պատճառները։ Էֆեդրայի բարերար ազդեցութեան մասին վկայում է Կայսերական գինուորական-բժշկական ակադեմիան, ուստի և թոյլատրուած է վաճառելու (տես „СВѢТЪ“ լրագրի № 74)։ Էֆեդրայի բժշկական յատկութեան մասին բրոշիւրները արժեն 20 կոպ.։ 2 ֆունտ անուռաայինի հետ ուղարկում է ձրի։

Հասցէն Г. Бузулукъ, Самарск. губ. складъ Т. М. Артащева д. № 516.

Ստացած ունեմ չնորհակալութեան բազմաթիւ գրութիւններ։

(794) 3—1

ԱՒԵՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵ

ԵՐԿՈՒ ՍԵՓԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆՎԵՑՅԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է, մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողներին տրւում են առեստատներ։

Ասնդների առարկաները սրանք են.—1) Առևտրական Ճոխաութիւն 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրայ, 5) Առևտրական) թղթակցութիւն 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7 Գեղագրութիւն, (վատ ձեռքի—почеркъ · ուղղելը)։

Ուսումն սկսուելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնները, սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սոլոլակում, Ալէքսանդր Փրիմրոսովի տանը, № 9, Սերպիևսկայա և Նագորնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրն ու կանոնները կարելի է ստանալ 2 ՐՈՒԱՊԷՍ եկը. Ծովհանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են կուրսեր հիմնողին.—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

(789) 25—6

Дозв. цензурою, Тифлисъ, Іюля 15-го дня, 1897 г. Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանցի։ Типогр. А.О.Меликъ-Шахназаріанца, Головинскій просп. домъ Рейтера